# ԼՐԱՑ ԳԻՐ

## ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՄ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ — ՆՈՒՄԵՐ. 21

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1832 ԱՊՐԻԼԻ 15։ ՈՐ Է ՌՄԽԷ ԶԻԼՔԱՏԷԻ ԺԳ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ։

### ԳՈՐԾՔ ՆԵՐՔԻՆ

Մեհափառ Ինքնակալն մեր որ միշտ իւր խնամքը և ողորմութիւնը 'ի վերայ ծառայից անպակաս ունի, մշտնջենաւոր կացցէ յարքայական գահն իւր. որ քաղցրադութ սիրոյն շէվալ ամսոյն 29 շաբաթ օրն՝ այժմեան Գայմագամ փաշային Գալաթայ լիմանիին մօտ եղած ծովեզերեայ ապարանքը գնալով՝ նոյն տեղիքն յարգեց։

Մայր Անատօլուի ընդհանուր հրամանատար Հիւսէյին փաշայն, և Սերասքեր փաշայն, և Գափուտան փաշայն, և Փէրիգէւ խասսա Մհմէտ փաշայն, և արքունի մանսուրէ զօրաց Մուհամմէտ փաշայն, և Խօսրէֆ փաշայն, և Քէհեա պէյն, և Տէֆթէրտար՝ և Րէյիս էֆէնտիներն, իր վեհափառ հրամանովը 'ի կողմանէ Գայմագամ փաշային ատոնց ազդարարութի ըլալով՝ վերոյիշեալ ծովեզերեայ ապարանքը եկան. բայց Մուհամմէտ փաշայն, և Րէյիս էֆէնտին տկարութի անձին ունենալով՝ չըկարացին գալ։

Եւ ժամանակ ժամանակ ասոնք ամմէն մէկը զատ զատ Թագաւորին առջևը խոնարհութե խօսելով, զանազան շնորհացը արժանի եղան. և այսպէս նոյն գիշերը հոն մնացին. և միւս օրն ալ կրկին Ինքնակալին առջևը խոնարհութե գացին, և արքայական օրհնութեը արժանի եղան. և ապա իր հրամանովը ամմէն մէկը իրենց տեղերը ետ դարձան։

Եւ բարեխնամ Թագաւորն այսպէս բազում շնորհս առնելէն 'ի զատ՝ գիշերմը ևս նոյն ապարանքը մնաց, և միւս օրը զկնի կէս աւուրն յարքունի ապարանքը դարձաւ։

---

Իսկիւտարու մօլլայ Ճղալ զատէ միր Մուհամմէտ Թահիր էֆէնտին մեռնելուն համար, նոյն մօլլայութիւնը շէվալի 21 օրէն տիրելով՝ սիւլէյմանիէյի դասատուներէն (միւտէրրիսներէն) Մուհամմէտ սալիհ էֆէնտիի որդւոյն Թոռանը՝ Մուհամմէտ Րուշտի էֆէնտիին շնորհեցաւ։

Եւ Եէնիշէհիր Փէնարի մօլլայութե այժմեան տիրող՝ Թահիր էֆէնտիի որդի Աթըֆ էֆէնտիին՝ 248 թուէն մինչ 'ի ձէմազիլ ախըրի վերջըն՝ և երկու ամիս ևս աւելցընելով անոր շնորհեցաւ։ Եւ նոյն մօլլայութիւն վերոյիշեալ թուին րամազանի

թ

սկիզբէն տիրելով, Սիւլէյմանիէյի դասատու՝ Մուստաֆա քէտխիւտաի որդի սէյյիտ Մուհամմէտ Նազիֆ էֆէնտիին շնորհեցաւ։

Եղիւպի մոլլայութիւն նոյն Թըվին ճեմազիըլ ախըրի սկիզբէն տիրելով, Սիւլէյմանիէյի հինգերորդ մասին հետ՝ գարիյէ Թէքիէյին մտրեսէին դասատու՝ տիմէ-Թօզալըի որդի սէյյիտ Մէհմէտ Նէճիպ էֆէնտիին շնորհեցաւ։

Երզրումի մոլլայութիւն եւս նոյն Թըվին րամազանի սկիզբէն տիրելով, Գօնայի նախկին մոլլայ Ֆէյզիի որդի՝ սէյյիտ Մէհմէտ էֆէնտիին շնորհեցաւ։

Ճումաափազարիի դեմերուն (գազաներուն) արփալըխին այժմեան տիրող՝ Մէքքէյի նախկին մոլլայ Մուհամմէտ սայիտ էֆէնտին ազատ ըլլալով, անոր տեղը Մէքքէյի աստիճան ունեցող՝ Եդիրնէյի նախկին մոլլայ՝ րէյիս արիֆ էֆէնտիի որդի Մուհամմէտ լայիֆ էֆէնտիին զիլքատէի սկիզբէն մինչ ՚ի շէվալի վերջը տիրելով այն արփալըխը շնորհեցաւ։

Եւ զիլքատէի ամսոյն հինգերորդ օրէն սեպված՝ Մէքքէյի աստիճանով անկեց յառաջ մեռնող՝ եպարքոս Եուսուֆ փաշայի եղբայր Սիւլէյման պէկի որդի Մուհամմէտ քեամիլ պէկ էֆէնտին Մէքքէյի աստիճանով ուրախացաւ։

---

Այս անգամ Դամասկոսի քաղաքէն կոր դացողներուն և բնակիչներուն կողմանէ՝ մեծի տրուէ եկած իլամին և արզմահզէրին և այլ գրուէց մէջը գրված էր այսպէս.

* Այժմեան Դամասկոսի բդեշխն և միրհաճ հաճի Ալի փաշային գիտութիւնը և բոլոր բնակիչներուն միաբանութիւնը՝ հաճը գնացողներուն պիտոյքները պատրաստած էր. բայց Մուհամմէտ ալի փաշայի որդին Իպրահիմ փաշայն՝ Աքեայի վրայ ձեռք երկնցնելուն պատճառովը, Սայտայու և Նապուլուսի կողմերէն ՚ի վաղուց հետէ արքունի Սիւրրէին համար պատրաստ եղած սաակները և ղահրէները և խըրպաները և այլ հարկաւոր բաները չէ կաւ. անոր համար հաճի Ալի փաշային կողմանէ քանիցս անգամ Իպրահիմ փաշային գիր գրվեցաւ.

Սակայն այն ալ մնոտի պատճառներ մէջ բերելով՝ վերոյիշեալ պատրաստ եղած պիտոյքները արգելեց. և այս անկարգ շարժմունքներուն պատճառովը կարելի է որ արտաքացիքը ալ դրդըվելով՝ ճանապարհի ապահովութիւնը վերցըվի. որ հաճը գնացողներուն գլխաւորապէս պէտք ըլլալուն համար, այս տարի հիւճճաճը Դամասկոսէն դուրս հանելը՝ այսքան մարդիկ յայտնի փորձութեան մէջ ձգել ըսել է։

Եւ այս տարի հիւճճաճին գնալը դատաստանի յարմար և խոհեմութեան պատշաճ չըլլալով՝ Դամասկոսի մէջ մնալը բոլոր գիտնոց և չորս կրօնքի դենպետներուն (միւֆթիներուն) կողմանէ ծանուցված և յայտնըված էր. և արքունի սիւրրէին ետ դառնալը վայելուչ ըլլալը գրըված էր ||։

Ապա այս տարի հիւճճաճին ետ Թողուլը՝ բանին հարկաւորութեն ըլլալով, այժմ Թագաւորական հրամանին կերպովը՝ արքունի սիւրրէին դէպ ՚ի Հալէպ դառնալուն համար՝ վերոյիշեալ Դամասկոսի բդեշխին յայտարարութիւն եղաւ.

---

Ժամանակէմը ՚ի վեր Թագաւորեալ քաղաքին մէջը ամպար էմինի եղող Մուսայ աղայն ազատ ըլլալ հարկաւորեցաւ. և անոր տեղը հաֆըզ Սալիհ էֆէնտին դըրվելու համար, զահրէ նազըրի հաճի Սէլի աղայի կողմանէ գրուէ խնդիր եղաւ, և վեհափառ Ինքնակալէն հրաման ուղվեցաւ. և արքայական կողմանէ հրաման ըլլալով՝ Սալիհ էֆէնտին ամպար էմինի կարգեցաւ, և շէվալ ամսոյն 23 ին խլաթ հագաւ։

Արքունի Թուֆէնկ խանէին մէջը եղող գործակալ վարպետներէն հայ ազգաւ Պաղտասար անուն վարպետը, վափուռ ՚ի գոլորշիով գործածվելու չարխմը հնարեց. և օրինակի համար մէկ հատը շինեց։ Եւ մինչև հիմա Սիւնիկիւ խանէ ղմփարայի չարխին մէջը գործածելը, մեծի տէրութեան նախարարներէն՝ այժմ պատերազմական

գործիքներուն Նազըր Եղօղ էֆէնտիին կողմանէ յայտարարուած եղաւ ։

Եւ այս յիշեալ անձին այս կերպով վափուռ շինելովն իր յայտնի ըրած հնարագիտութիւնը և ճարտարութիւնը փոխարէն, ասկէց ետև Թագաւորեալ քաղաքին մէջը վափուռ շինելը իրեն յատկացաւ. ոչ զի ասկէց ետև ով որ վափուռի վերաբերել բան մը շինել տալու ըլլայ, անոր շինել տայ. և ուրիշ տեղ չըշինուելու համար, պէտք եղողներուն հրովարտակ խըրկըւիլը խնդրեր եղած էր. և Ինքնակալին հրամանին կերպովը հրովարտակմը շնորհեցաւ ։

## ԳՈՐԾՔ ԶՕՐԱՑ

Անատօլուի ընդհանուր հրամանատար բարեհամբաւ և մեծարոյ Հիւսէյին փաշային հետը՝ Անատօլուի կողմը խըրկըւելու արքունի և մանսուրէ հեծեալ զօրաց գաւառապետներուն (միրլիվաներուն), և ձիաւոր գունդերուն՝ գաւառապետներուն և գնդապետներուն ճամբու ծախքի համար՝ մեծափառ Թագաւորը պարգևներ տալ կամեցաւ ։

Ուստի Ֆէրիգի աստիճանի մանսուրէ պէկլէր պէկի Մուհամմէտ փաշային, և արքունի զօրաց գաւառապետ Տիլավէր փաշային, և մանսուրէ զօրաց գաւառապետներէն Խալէնտէր փաշային, և Պէքիր փաշային, և արքունի զօրաց առաջին հեծեալ գունդին գնդապետ՝ Մուստաֆա պէկին, և երկրորդ գունդին գնդապետ՝ Մուհամմէտ պէկին, և մանսուրէ զօրաց ութերորդ գունդին գնդապետ՝ Ռէշիտ պէկին, և ձիաւոր մանսուրէ զօրաց վեցերորդ գունդին գնդապետ՝ Մուհամմէտ ալի պէկին, անոնք ամէնն ալ այս շէվալ ամսոյ 22 կիրակի օրը իր վեհափառ Տէրութիւնը հրամանովը առջևը բերել տըւաւ. և ամէն մէկին զատ զատ արքայավայել պարգևներ շնորհելէն յետոյ, իր արքայական բերանովը ևս՝ տէրութեան կանոններու՝ և պատերազմական արհեստի և զօրաց կառավարութեան վերաբերեալ մէկ քանի բան հարցուց, և ապա սկսաւ խօսիլ այսպէս ։

* Դուք որ ձեր հաւատարմութիւնը և ջանքովը պատերազմական արհեստի տեղեակ ըլլալնուդ համար՝ արքայական հովանաւորութիւնս մեծ աստիճաններու արժանի եղած էք. նաև ուրիշ ծառաներս որ սրտի մտօք՝ մեր կրօնքին և մեր տէրութեան կը ծառայեն, ահա ձեզի և անոնց՝ արքայական ողորմութեան դուռըս բացէ, և ամէնուն բանմը չըխնայելս յայտնի է. և տիլ այսուհետև գաւառապետներըդ՝ և այլ ընտրեալներըդ օրըստօրէ մեծնալով, առաւել բարձր աստիճաններու արժանի կըլլաք ։

Ուստի բարձրեալն Աստուած ձեր գործոցը յաջողութիւն պարգևէ. և դուք միշտ հաւատարմութեամբ՝ զօրականի անուան վայելուչ և իմ արքայական շնորհներուս յարմար շարժելէն մազի չափ ետ չըմնաք. և՛ի ներքոյ կառավարութեան ձեր գտնըւող մեծ և փոքր զօրավարները և զօրքերը կարգադրութեան կերպովը աղէկ կառավարելով՝ միասիրտ և միախորհուրդ ըլլալու ջանք ընէք. և Աստուած ձեր ամէնուն ալ յաջողութիւն տայ ըսելով, արքայական օրհնութիւնը օրհնեց, և Թագաւորութեան հրամանը և պատուէրը յայտ արար ॥ ։

Եւ վերոգրեալ Անատօլուի ընդհանուր հրամանատարին հետը գնալու պաշտօնատարները մէկ քանի օր յառաջ գունդերով (ալայներով) Անատօլուի կողմը խըրկըւած էր ։ Նմանապէս որքան գունդ ալ իրենց պաշտօնատարներովը խըրկըւելու հրաման եղաւ, վերյիշեալ օրը անոնց պէտքները հոգալու և կարգադրելու համար զբաղմունքի մէջ եղող՝ մանսուրէ զօրաց գնդապետներէն (միրալայներէն) Ֆէրհատ պէկին, և Տավուտ պէկին, և Հասան պէկին, և Հիւսէյին պէկին, թէ անոնց և թէ մեկալներուն ամէնուն ալ տըրըւելու արքայական պարգևները՝ վերյիշեալ Ֆէրիգ Մուհամմէտ փաշային յանձնըւելով խըրկըւեցաւ ։

Եւ ահա վեհափառ և մեծախնամ Ինքնակալին իր կարգադրեալ զօրքերուն

վրայ եղած խնամքը այս կերպով ալ յայտնըւեցաւ ։

—

Արքունի մանսուրէ զօրքերէն այժմ պատրաստուած չորս ամբողջ գունդ (պէօլիւկ) Թօփճիներուն՝ ամմէն երկու գունդը մէկ Թափօր սեպելով, ասկէց յառաջ արքային հրամանովը ամմէն մէկ Թափօրին՝ մէկ հազարապետմը դըրուած էր․ և երկու Թափօրը՝ մէկ գունդմը սեպելով, մէկ գնդապետ (միրալայ), և մէկ տեղապահ (գայմագամ), և մէկ ալայ էմինի դըրւիլ՝ սահմանադրել կանոնին կերպովը հարկ եղած էր ։ բայց հիմա տեղապահ և ալայ էմինի դըրւելուն տեղը՝ միայն մէկ գնդապետ դըրւիլը պէտք եղաւ ։

Ուստի այս Թափօրներուն շատ ժամանակէ 'ի վեր կառավարիչ Մուստաֆա աղայն՝ պատերազմական արհեստին և զօրաց կառավարութեը հմուտ և հաւատարիմ ըլլալովը, յիշեալ Թափօրներու գնդապետ դըրւելուն համար՝ ֆէրիգլի աստիճանի խասսա պէկլէր պէկի Ահմէտ փաշային կողմանէ արքային խնդիր եղաւ․ և այս խնդիրքը վեհափառ Ինքնակալին հաճոյ ըլլալով, յիշեալ Մուստաֆա աղայն նոյն Թափօրներուն գնդապետ դըրւելու հրաման եղաւ․ և հրովարտակն ալ՝ այս շէվալ ամսոյ 18 օրը վերոյիշեալ Ահմէտ փաշային ձեռամբը շնորհեցաւ ։

—

Մանսուրէ զօրաց գունդերէն Իւսքիւպին մէջը գտնըւող հինգերորդ գունդին տեղապահ Հասան պէկը՝ Թագաւորեալ քաղաքը եղող չորրորդ գունդին գնդապետ դըրուած էր, ինչպէս 18 Նումերայով տպուած Լրոյ գրին մէջը յիշըւեցաւ․ հիմա անոր տեղը մէկ տեղապահմը դըրւիլը պէտք ըլլալով, այն հինգերորդ գունդին ալայ էմինի Ալի պէկը, և երկրորդ Թափօրին հազարապետ Օսման աղայն, և նոյն Թափօրին սօլ գօլ աղասի Մուստաֆա աղայն, և առաջին գունդէն աւելի ըլլալով սէրասքէրի դուռը կեցող Թափօրին սաղ գօլ աղասի Զէքէրիա աղայն, ասոնք ամմէննալ զօրքերու վերաբերեալ կառավարութեը կարող և փորձել ըլլալնուն համար, Ալի պէկը՝ հինգերորդ գունդին տեղապահ, և Օսման աղայն ալ՝ Ալի պէկին տեղը ալայ էմինի, և սօլ գօլ աղասի Մուստաֆա աղայն ալ՝ 11 Նումերայով տաճկաց տըպւած Լրոյ գրին մէջը յիշըւած կերպովը՝ հանգըստութի շնորհ եղած հազարապետ Ահմէտ աղային տեղը՝ հազարապետ, և Զէքէրիա աղայն ալ՝ նախայիշեալ երկրորդ Թափօրին հազարապետ կարգեցան ։

Եւ 18 Նումերայով տպւած Լրոյ գրին մէջը յիշըւած կերպովը՝ մետասաներորդ գունդին տեղապահ գտնըւող Դաւուտ պէկն՝ միրալայ, և ալայ էմինի Էմին պէկն՝ տեղապահ, և առաջին հազարապետ Ալի պէկն՝ ալայ էմինի դըրւելնուն համար, նախայիշեալ Ալի պէկին տեղը՝ և Իւսքիւպի մէջը մնացող երրորդ Թափօրին հազարապետ Արիֆ աղային տեղը՝ ուրիշներուն ընտրըւիլը հարկ եղաւ ։

Եւ յիշեալ գունդին չորրորդ Թափօրին սաղ գօլ աղասի Դաղըստանցի Հաճի Ահմէտ աղայն, և նմանապէս երրորդ Թափօրին սաղ գօլ աղասի Ֆիլիպէցի Հաֆըզ Իպրահիմ աղայն, ասոնք երկուքն ալ պատերազմական արհեստին տեղեակ ըլլալնուն համար, Հաճի Ահմէտ աղայն՝ առաջին Թափօրին, և Հաֆըզ Իպրահիմ աղայն՝ երրորդ Թափօրին՝ հազարապետ դըրւեցան ։

Եւ Երզըրումի մէջ եղող տասն և վեցերորդ գունդին՝ երրորդ Թափօրը որ արքային հրամանաւ Խարս քաղաքը գացին, այն Թափօրին մէկ հազարապետմը դըրւիլը հարկ ըլլալով՝ սէրասքէրի դուռը կեցող նախայիշեալ Թափօրին երրորդ հարիւրապետ Խաւթալցի Մուստաֆա աղայն՝ ամմէն կերպով կառավարութե կարող ըլլալուն համար՝ վերոյիշել Թափօրին հազարապետ կարգեցաւ ։

Եւ Վիտինի մուհաֆըզ՝ նախկին եպարքոս Իզզէթ Մուհամմէտ փաշային կառավարութե ներքևը եղած Թափօրին հազարապետ Մուրթուզա աղային մեռնելուն համար՝ նոյն Թափօրին սաղ գօլ աղասի Մուստաֆա աղայն՝ Ինքնակալին հրաման-

նովը և սահմանած կանոնին հարկադրութեը Թագաւորեալ քաղաքը բերված էր․ և պատերազմական արհեստին հմտութեը նայելով և տակաւին չըդիտցած արհեստները՝ Ֆրանքերին առջևը իրեն սորվեցընելով, լաւ տեղեակ եղած էր։

Ասոր վերոգրեալ Թափօրին հազարապետ դըրվիլը Ֆրանքէր փաշայն՝ վեհափառ Ինքնակալին խընդիր ըրած էր․ և խնդիրքը ընդունելի ըլլալով, թէ առոր և թէ վերոյիշեալ ամմէնուն հրովարտակները և սաղխճմաններուն համեմատ նշանները մեկ տեղ՝ մեծարու Ֆրանքէր փաշային առջևը իրենց պարգև եղած է։

## ԳՈՐԾՔ ԱՐՏԱՔԻՆ

Այս տարեկին արտառոց լուրը՝ [illegible] [illegible] [illegible] ըրած [illegible] [illegible]։

—

Եւրոպայի աստեղաբաշխական Լրոյ գրերը՝ որ հրատարակութե ձեռքը կըլլորտին, կըպատմեն որ՝ երկինքը գիսաւոր աստղը պիտի ծագի, և երկրագունտին շատ մօտ պիտի տայ․ և այս լուրը այն աստիճան հրատարակված է, որ հասարակութե սրտին ահ և երկիւղ պիտի ձգէ։

Մենք այս լուրին որպիսութը՝ և որչափ կարելի է ստուգութը ծանուցանելով՝ հասարակութեը երկիւղէ ազատել, և սրտերնին հանդիստ և ապահով ընել արժան համարեցանք։

Այս թըվականին մէջը որ է ամ տն 1832, ոչ թէ մեկ՝ այլ երկու գիսաւոր աստղ ծագիլը ստուգված է․ բայց երկուքին ալ երկրագունտին մօտ տալը այնքան քիչ է, որպէս թէ չըմօտենալու պէս է․ և այս մեր օրինակէն կըրնայ յայտնի ըլլալ։

Օր օրինակ՝ մօտ տալը եթէ մօտ չըտալուն հետ բաղդատվի, մեկ թիվը՝ 2321 միլեօն թըվին հետ բաղդատվելուն պէս է․ [illegible]՝ երբ որ այն երկու աստեղին մօտ տալը մեկ թիվ համբրվի, և չըմօտելը՝ 2321 միլեօնը համբրվի, ասոնց մէջը եղած տարբերութե նմանը կըլլայ։

Ու այս մեր ըսած աստղը որ պիտի ծագի, Եւրոպայի աստեղագէտներուն մէջը՝ Պիէլէ անունով հրատարակված և գիտցըված է․ և անցեալ ժամանակներուն մէջը եօթն անգամ ծագեր է․ և այս անգամ յամի տն 1832 ին երևնալը՝ ութերորդ անգամը պիտի ըլլայ․ և իր շըջանի տևողութե ժամանակը որ պիտի երևնայ, 1212 օր է։

Ու այս տարի յունիսի 24 ին, [illegible] 48 թըվին սեֆէրի մէջ, երկրագունտին մերձաւոր գտնըվիլը 9 միլեօն՝ 3 հարիւր 49 հազար 5 հարիւր ժամու չափ երկրի երեսէն հեռաւորութե միջոց ունենայ պիտի։ Ու այս աստեղին և երկրագունտին մէջը եղած մերձաւոր միջոցը հեռաւորութե՝ մեղի մեծ մխիթարութիւնն է։

Ու ահա իսկըզբանէ աշխարհի մինչև ցայսօր ծագեալ երկրագունտին մերձաւոր եղած բոլոր գիսաւոր աստեղներէն, յամի տն 1680 աստղը ծագեցաւ․ և մերձաւոր միջոցը հեռաւորութե 16800 ժամ ըլլալը, երբ որ հաւաստեաւ յայտնըվեցաւ, տակաւին երկրագունտին մօտ տալ չըտեսնըվեցաւ։

Ու այն աստեղները որ այս տարի դարձեալ պիտի ծագին, անոր երկրորդ աստղը՝ նոյն աստեղաբաշխներուն մէջը Ֆէյէլէ անվամբ կը կոչվի․ և անոր շըջանին ժամանակը 2445 օրվան չափ է։

Ու այս տարի հոկտեմբերի եօթներորդ օրը, որ է 48 թըվին Ճէմազիել էվէլի մէջ, երկրագունտին մերձաւոր միջոցը հեռաւորութեան 18 միլեօն՝ 526 հազար 500 ժամու չափ պիտի ըլլայ։

Ու ասկէց ետև աստեղաբաշխներուն յայտարարութե կերպովը այս յիշեալ Պիէլէ և Ֆէյէլէ աստեղներէն 'ի զատ, գիսաւոր աստեղներու տեսակէն՝ Հալի անունով կոչված աստղն ալ յամի տն 1835 ին նոյեմբերի մէջը երևնայ պիտի։

Ու այս երրորդ աստղը որ պիտի երևնայ, ասկէց յառաջ յամի տն 1811 ին երևցած գիսաւորէն, որ յաջողութե և առատութե նշանակ եղաւ, այն աստղէն

աւելի լուսաւոր և փայլուն պիտի ըլլայ։

Եւ այս Հալլի անուամբ կոչուած փայլուն աստղը՝ որ երրորդ անգամ պիտի երևնայ, ասոր շրջանին ժամանակը 27997 օրվան չափ է․ և իր շրջանին ժամանակը կըտեսնըվի։ Բայց երկու առաջին յիշեալ աստեղներուն տեսնըվիլը դըժվարին է, միայն թէ աստեղաբաշխական դիտակով (տիւրպիւնով) տեսնըվիլը կարելի է։

—

Այս գիսաւոր ըսված աստեղները՝ երևցած կերպերուն նայելով՝ Զուզէվապէ և Զուզէնեպ անուամբ հրատարակել են․ և եօթը մոլորակներուն համեմատելով՝ եօթը կերպ են։

Երևցած ժամանակը եթէ բարի աստեղներուն կերպովը երևնալու ըլլայ, աստեղաբաշխական արհեստի գուշակութը՝ բարութի և օգուտ կընշանակէ․ և չար աստեղներուն կերպովը երևնայ, չարութի և վնաս կընշանակէ։

Եւ ասկէց 'ի զատ եթէ գոյնը խիստ կանանչ ըլլայ, բարութի և առատութի կընշանակէ․ և եթէ ուրիշ անյարմար գունով երևնայ, իր երևցած գոյնին կերպովը գէշ բան կընշանակէ։

Եւ այս թարգմանված աստեղներուն ծագումը՝ թէ աստեղաբաշխական արհեստով հաստատված է, բայց որ հորիզոնի մէջ գըտնըվիլը յիշված չէ։ Եւ ասոնց ծագելուն սկիզբը և վերջը՝ շատ անգամ ընդհանրապէս չերևնար․ միայն հորիզոնին մէջը կերևնայ։

Եւ Եւրոպացի աստեղաբաշխներուն գուշակութիւնները իրենց երկիրներուն երկայնութը և լայնութը համեմատելով գըրված ըլլալուն համար, այս ըսած աստեղները այն կողմերը երևնալովը՝ գուշակութիւններն ալ անոնց երկիրները կապալիլ կըհարկաւորի։

Յիրաւի աստեղաբաշխական արհեստով երկրի երեսին վնաս տալը՝ խիստ քիչ ըլլալը՝ Լրոյ գրքին տպագրատանը կողմանէ ալ թագաւորել քաղաքիս աստեղագէտներէն ստուգելով տպագրեցաւ։

Բայց բոլոր տիեզերաց մէջը հրատարակելուները՝ յաւիտենականին այ օրհնեալ կամքէն կախեալ ըլլալով, 'ի հարկէ գէշի վրայ չըմեկնել, բարի մեկնութի տալ ծառայներուն պարտքն է։

Միայն կըխնդրեմք յածային բարերարութէն, որ այս աստեղներուն գուշակութիւնը առ 'ի բարին դարձունէ։

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԶԱՐՄԱՆԱԼԻ

Շուտով ապերախտից պատժըվելուն համար։

—

Մեծազօր Թագաւորին հնազանդութի ընօղներէն եթէ ապստամբութե մեղանչելու ըլլան, ապա մեղայ գոչելով Արքային գթութեը ապաւինելով, թէ կենդանութե ատեննին և թէ յետոյ հանգիստ և խաղաղ կըլլան․ չէնէ անտարակոյս շուտով կըպատժըվին։

Ինչպէս այժմեան Սօֆեայի դատաւորի փոխանակ (նայիպ) Մուհամմէտ աղէպ էֆէնտին՝ արքայանիստ քաղաքը խըրկած դատաստանական յայտարար թըղթովը (իլամովը) կըվկայէ այսպէս․

Ասկէց յառաջ Փէրեզնիկ և Իզնէպօլ քաղաքներուն այանը՝ գափուճի պաշի գառա Ֆէյզի օղլու Ալի պէկն որ վեհափառ Ինքնակալին կողմանէ շատ բարութի տեսածէր, ապերախտ գտնըվելով ապստամբեցաւ․ և յետոյ Արքային բարեբարութը յաղթըվելով, և իր հետը եղած ապստամբները ջնջըվելով, ինքն ալ մինչև հիմա բարբարական փախստական կըշրջի։ Եւ այս ապերախտ Ալի պէկին ապստամբութեան ժամանակը՝ Սօֆեայի մօտ Շէհէրքէօյի ըսված գիւղաքաղաքին (խասապային) բընակիչներէն՝ Գառա Նօֆձա փանկացի Եօմէրի որդի՝ սառան Պէկթաշ անուն մարդմը, Սօֆեայի գիւղերուն բնակիչներէն գանձալը Ահմէտ անունով մէկուն իր կամաւոր երկու հարիւր ոչխար, և մէկ թախըմով ձի մը, և մէկ ապայ, և մէկ ապայ փոթուռ, և մէկ սիլահլըխ իբրև կաշառ տալով, յիշեալ ապստամբ Ալի պէկին օգնական խըրկած էր։

Հիմա այս պէկթաշը իր տըված բանե-րը ետ ուզելու համար, այս անցած րամազանին ասամն և եօթներորդ գիշերը Սօֆեայի միւսէլլիմ Մուհամմէտ աղային գիտուէքը՝ նոյն քաղաքի մահքեմէն դատաստանի հրաւիրելով, բոլոր գլխաւոր բնակիչներուն ներկայութէ առջևը խօսեր է։

Թէպէտ ես այս Ահմէտին նախայիշեալ դրամը և ձին և զգեստը տըված եմ, բայց այս մարդը՝ Ալի պէկին քովը մէկ քանի օր կենալէն յետոյ փախաւ, և այն պատճառովը տըվածներս ետ կըխնդրեմ։

Իսկ Ահմէտը անոր խօսքը ճշմարտելով՝ յիրաւի է ըսաւ. զի ես սատանայի հետևելով սխալեցայ, երբ որ այն դրամը և ձին և զգեստը առի, վերոգրեալ ապստամբներուն գլխաւորին քովը գացի. և այն ժամանակը աջ ձեռքիս առաջին և երկրորդ և երրորդ մատներուն մէկ սաստիկ ցաւմը պատահեցաւ, և այն գիշերը մինչև ՚ի լոյս չըքնանալով անհանգիստ եղայ. և այն ցաւէն կրակի պէս տաքութիւնը անդամներուս տարածվելով ծանր հիվանդացայ։

Իսկ ապստամբներուն գլխաւորը՝ դեղ ընելուս համար՝ զիս իմ գիւղս խրկեց. և հոն քիչմը դեղ ընելովս՝ ցաւըս անցաւ, և կրկին անոր քովը գնացի. և իսկոյն առջինէն աւելի ցաւմը գալով ձեռքիս՝ մինչև դաստակս (պիլէկըս) ուռեցաւ։

Ուստի աղաղակիս ձայնէն քովս գտնըվօղները ձանձրացան. և իմ ամենևին կարողութի չունենալս՝ ապստամբներուն գլխաւորը իմանալով, ինծի ճամբայ տըվաւ,

Եւ այն ժամանակէն մինչև հիմա օր է օր ցաւս սաստկացաւ. և ապրուստ չունենալով, և ցաւիս դարման փնտռելով, այն առած դրամս ծախս (մասրաֆ) ընելէս ՚ի զատ, այն ձին և զգեստը վաճառեցի. Եւ ահա յածայէն կողմանէ սաանկ պատժըվելով՝ խելքս գլուխս եկաւ. և իմ յանցանքներուս փոխարէն՝ ցաւագար ըլլալէս ՚ի զատ, ամենևին տեղացիք ապրուստ չունենալով՝ թշվառ և մուրացիկ եմ ըսելով, սկսաւ լալ. և փէօտէքիով փաթթած ձեռքին կապը արձըկելով՝ դատաստանի ժողովոյն մէջը գտնըվօղներուն ցոյց տըվաւ. և անոնք ալ տեսան որ յիրաւի ձեռքը տիկի նման (թուլումի պէս) ուռեցած էր, և այս ցաւին տեղեակ եղօղ ներկայ անձինքներն ալ երբ նայեցան, հաստատեցին՝ թէ այս մատերս այն ուռեցած ձեռքը չորնայ պիտի, և դաստակէն վար իյնայ։

Ուստի պէկթաշը այս բաները տեսնալով՝ զգաստացաւ խելքը գլուխը բերաւ. և յառաջմանէ տըված դրամը, և ձին, և զգեստը, և սիլահլըխը խնդրելէն դադարեցաւ։

Բայց իր սրտանց հըզըջալը՝ և ապըստամբներուն գլխաւորին օգնութի ուղարկելը՝ իր խօսքերէն յայտնի ըլլալով, իրեն պատիժ ըլլալու համար, վերոյիշեալ միւսէլլիմին ձեռամբը բանտը դրվեցաւ. և յետոյ մեղայ գոչելովը՝ գառըը կէձէսի ըրված գիշերը ազատվեցաւ, և իր քաղաքը գնաց։

Եւ ահա այս մարդուն իրեն ըրած յանցանացը փոխարէն շուտմը պատժըվելովը, Աքային կամացը հակառակ եղօղներուն՝ միշտ կորագլուխ ըլլալնին՝ միայն վեհափառ Ինքնակալին բարեսրտութէն յառաջ գալը կիմացվի։

Ահա Աքային զօրացը դէմ տակաւին զէնք հըքաշօղը՝ եթէ այսպէս պատժըվելու ըլլայնէ, ապա ապստամբելով հրացան (թիւֆէնկ) նետօղը՝ որչափ պատիժ կրելը մտածըսա։ Ուստի քանի որ ժամանակը չէ անցեր, մեղայ գոչելով ապահով ճանապարհը գտնալ պէտք է։

Դու մի՛ կարծեր՝ թէ ապերախտք և ապստամբք՝ բարի գտնան.
կամ գլուխնին կըկտըրըվի՝ կամ կէլանէն ՚ի կախա ղան։